ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. օգոստոսի 6-ից օգոստոսի 21-ն ընկած ժամանակահատվածում ք.Շանհայ (Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

1) Սոսե Ստեփանյան, ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության պետ,

2) Աննա Բերակչյան, ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գանձումների համակարգման և զարգացման բաժնի պետ,

3) Մարիամ Տիտիզյան, ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության իրավապահ համագործակցության և տեղեկությունների վերլուծության բաժնի պետ,

4) Հասմիկ Մինասյան, ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության ընթացիկ մաքսային հսկողության բաժնի պետի տեղակալ,

5) Տաթևիկ Դանիելյան, ՀՀ ՊԵԿ պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության ցամաքային անցման կետերում աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ,

6) Ջուլիետա Մկրտչյան, ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության ուղևորների մաքսային սպասարկման և հսկողության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք.Շանհայ, 2024թ. օգոստոսի 6-ից օգոստոսի 21-ը:

3. **Հրավիրող կողմը՝**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում բազմակողմ համագործակցության նախագծերի իրականացման նպատակով հատկացվող աջակցության շրջանակներում Շանհայի մաքսային քոլեջի նախաձեռնությամբ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել «Անվտանգության և միջազգային առևտրի դյուրացման համար խելացի մաքսային ծառայություն, խելացի սահմաններ, խելացի կապուղի համագործակցություն» խորագրով դասընթացին՝ ծանոթանալ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում առկա խելացի համակարգերին, ինչով պայմանավորված այցելություններ են կազմակերպվել Շանհայի «E&P International» ընկերություն, Սյամենի ավտոմատացված տերմինալ (COSCO SHIPPING Smart Ports), Չինաստանի Ֆուցզյան նահանգի պիլոտային ազատ տնտեսական գոտի, ԲՐԻԿՍ-ի արդյունաբերական հեղափոխական նորարարական կենտրոն ու Չինաստանի (Շանհայ) փորձնական ազատ առևտրի գոտու Լին-գանգ հատուկ տարածք:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր:

5. Քննարկված թեմաները՝

«Անվտանգության և միջազգային առևտրի դյուրացման համար խելացի մաքսային ծառայություն, խելացի սահմաններ, խելացի կապուղի համագործակցություն» խորագրով դասընթացին, ինչպես նաև հաջորդող շրջայցերին ու հանդիպումներին քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) «Չինաստանի մաքսային համակարգի առաջընթացը և մաքսային համակարգի արդիականացումը» թեմայի շրջանակում ներկայացվել է Չինաստանի մաքսային համակարգի արդիականացումը, այդ թվում՝ պատմական զարգացման գործընթացը: Ներկայացվել են տնտեսության բարեփոխումները վերջին 45 տարիների ընթացքում, ինչպես նաև մաքսային ծառայության կառուցվածքը:

2) «Խելացի մաքսային համակարգի ստեղծում և որոշ նախադեպային իրավիճակներ» թեմայի շրջանակում ներկայացվել է, թվային, ինտելեկտուալ և ավտոմատացված

տեխնոլոգիաների զարգացման կարևորությունը. մասնավորապես, որ այն ոչ միայն արմատապես փոխում է մաքսային կարգավորման էությունը և շրջանակը, այլև լուծումներ է տալիս մաքսային կարգավորման մեթոդների փոխակերպման համար: Ներկայացվել է նաև Չինաստանի լիազորված տնտեսական օպերատորների փոխճանաչման ինստիտուտը. ներկայումս Չինաստանը լիազորված տնտեսական օպերատորների փոխադարձ ճանաչման համաձայնագրեր ունի թվով 54 երկրների հետ:

3) «Չինաստանի մաքսային ձևակերպումների պարզեցման բարեփոխումները և կիրառված միջոցառումները» թեմայի շրջանակում ներկայացվեց մաքսային մարմնի իրականացրած բարեփոխումները և մաքսային գործառնությունների դյուրինացմանն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ մաքսային մարմնի տեղեկատվական կառավարման համակարգերը («Three Mutuals», «Single Window»), մաքսային հսկողության իրականացման համակարգերը, մաքսային մարմնի և այլ պետական մարմինների համագործակցությունը տեղեկատվական հարթակների միջոցով, մաքսային գործառնությունների դյուրացման նպատակով ձեռնարկված գործողությունները, մաքսային գործառնությունների արդիականացման Շանհայի փորձը:

4) «Խելացի նավահանգիստ ու մեկ պատուհանը՝ միջազգային առևտրի համար» թեմայի շրջանակներում ներկայացվեց նավահանգիստներում կիրառվող խելացի համակարգերը և «Մեկ պատուհան» համակարգի կիրառության փորձը:

5) «Մաքսային հսկողության հատուկ տարածքներ» թեմայի շրջանակում ներկայացվեց Չինաստանի ազատ գոտիները, որտեղ կիրառվում են այնպիսի մաքսային ընթացակարգեր, որոնց համաձայն ապրանքները ներմուծվում են առանց ներմուծման մաքսատուրքերի և հարկերի վճարման՝ որոշակի ժամկետով և երաշխիքի հիման վրա՝ օգտվելով մաքսային հսկողության պարզեցված ընթացակարգից: Ներկայացվեց մաքսային ձևակերպումների վերաբերյալ կարգավորումները, հարկերի վերադարձման քաղաքականությունը, մաքսային վճարների հավաքագրման մեխանիզմները և այլ կարգավորումները՝ ազատ տնտեսական գոտու շահառու հանդիսանալու համար:

6) «Չինաստանի մաքսային ռիսկերի կառավարման համակարգը» թեմայի շրջանակում ներկայացվեց կիրառվող ռիսկերի կառավարման համակարգը, այդ թվում՝ հավաքագրվող

տեղեկությունները, որոնք օգտագործվում են ռիսկերի գնահատման ժամանակ: Չինաստանի մաքսային համակարգում օգտագործվում է մաքսային ռիսկերի գնահատման նպատակով ներքին և արտաքին տեղեկատվությունը, ինչպես նաև վիճակագրական վերլուծությունը, համակարգի վերլուծությունը և այլ վերլուծական մեթոդները՝ ռիսկի առաջացման հավանականությունը որոշելու համար: Չինաստանում հաստատված են ռիսկերի մշակման ստորաբաժանման և մաքսանենգության դեմ պայքարի ստորաբաժանման միջև տեղեկությունների ձեռքբերման, փոխանցման և հետադարձ կապի մեխանիզմներ:

7) «Հարկերի հավաքագրման ու վարչարարության, ապրանքների ծագման առանձնաշնորհային կանոնների կիրառման վերաբերյալ» թեմայի շրջանակում ներկայացվեց Չինաստանի մաքսային համակարգում կիրառվող ապրանքների դասակարգման, ապրանքների ծագման և ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ կարգավորումները:

8) Սյամին կատարած այցի շրջանակներում՝ «Խելացի մաքսային և միջազգային համատեղ իրավապահ գործողությունները» թեմայով դասընթացի շրջանակում ներկայացվել է RILO AP, WCO CEN հարթակը, այլ երկրների կողմից նշված հարթակում մուտքագրված որոշ իրավախախտումներ, ներկայացվել են նախկինում և ներկայումս իրավապահ մարմինների կողմից իրականացված և իրականացվող օպերացիաները, այդ թվում DEMETRA X, որին մասնակցում է նաև Հայաստանը: Դասընթացի ընթացքում իրականացվել են գործնական խմբակային վարժություններ՝ մաքսանենգության առարկաների, ինչպես նաև մաքսանենգություն իրականացնող անձանց և վերջնական ստացողների բացահայտման վերաբերյալ:

9) «Կոսկո Հայսանգ» ավտոմատացված տերմինալ կազմակերպված շրջայցի ընթացքում ներկայացվել է բեռնարկղերի տեղափոխման 5G համակարգը և ավտոմատացված մաքսային հսկողության իրականացումը:

10) Սյամինի «Մեծ տվյալների վերլուծության» կենտրոնում կազմակերպված շրջայցի ընթացքում ներկայացվել է էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման գործընթացը, այդ թվում՝ հայտարարատուների սպասարկման գրասենյակը:

11) ԲՐԻԿՍ-ի արդյունաբերական հեղափոխական նորարարական կենտրոն կազմակերպված շրջայցի ընթացքում ներկայացվեց ԲՐԻԿՍ-ի ստեղծման պատմությունը ու

ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք ունեն ԲՐԻԿՍ-ի անդամ պետությունները:

12) «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության էությունը և զարգացման ուղին» թեմայով դասընթացի շրջանակներում ներկայացվել է «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության ստեղծման պատմությունը, առկա ձեռքբերումները, ինչպես նաև ապագա տեսլականը:

13) «Չինական (Շանհայ) փորձնական ազատ առևտրի գոտու Լին-գանգ հատուկ տարածք» կազմակերպված շրջայցի ընթացքում ներկայացվեց Յանգշան ազատ առևտրի գոտու ձեռնարկություններին տրամադրվող արտոնությունների վեց կատեգորիաները՝ հայտարարագրման ռեժիմները, առևտրի վերահսկողությունը, տարածաշրջանային կառավարումը, վիճակագրական համակարգերը, տեղեկատվության կառավարումը և մասնակցային կառավարումը: Գոտու խոշոր ձեռնարկություններից են՝ Tesla-ն, BWM-ն, Mercedes-Benz-ը, Lindt շոկոլադի ապրանքանիշը, IAT-ը և այլն: Ներկայացվել է նաև նոր հսկայական ավիացիոն նախագիծը, որը ներառում է «China Eastern»-ի միջազգային ավիացիոն սպասարկման հարթակի նախագծի մի մասը՝ 1,5 միլիարդ յուանի (207 միլիոն դոլար) ընդհանուր ներդրումով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ավարտին ՀՀ ՊԵԿ աշխատակիցները ներկայացրել են շնորհանդես՝ հետևյալ թեմաներով՝

- Ներկայացվել է ՀՀ մաքսային համակարգի բարեփոխումները, այդ թվում՝ մաքսային վարչարարության ռազմավարության 4 հիմնասյունները և դրանց շրջանակում ՀՀ ՊԵԿ կողմից վարվող քաղաքականությունը՝ առանձնահատուկ կարևորելով թվայանցումը, արդյունավետ ռիսկերի կառավարումը, ազգային և միջազգային մակարդակներում համագործակցությունը, մարդկային ռեսուրսների կառավարումը և արդյունավետ ենթակառուցվածքների առկայությունը:
- Անդրադարձ է արվել մաքսային մարմիններին վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի, պետական տուրքի, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների համար միասնական դրույքաչափերով վճարվող մաքսատուրքի

և հարկերի գծով մաքսային պարտավորությունները կատարելու (մարելու) ձևերին՝ նշելով ՀՀ-ում կիրառվող էլեկտրոնային վճարումների, ինչպես նաև վերջերս մաքսային մարմիններում ներդրված POS տերմինալներով մաքսային պարտավորությունների մարման հնարավորության մասին: Ներկայացվել է նաև «Մաքսային միասնական հաշիվ» էլեկտրոնային համակարգի ներդրման նախագիծը, որը միտված է նպաստել մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը՝ ծառայությունների և ներքին բիզնես գործընթացների արդիականացման, թվայնացման, մաքսային վարչարարության շրջանակներում գործընթացների դյուրացման միջոցով:

• Ներկայացվել է ՀՀ ՊԵԿ աշխատակիցների կողմից տվյալների շտեմարանների օգտագործման և միջազգային հարթակներում առկա տեղեկությունների վերլուծության արդյունքում ՀՀ ՊԵԿ կողմից բացահայտված մաքսանենգության խոշոր դեպքերը և առանձնահատուկ նշվել է այլ պետությունների իրավապահ մարմինների համագործակցության կարևորության մասին:

• Նշվել է նաև ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան համակարգի հնարավորությունների, ՀՀ ցամաքային անցման կետերում աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունների, ինչպես նաև միջազգային փոստային առաքումների ու էքսպրես-բեռների նկատմամբ կիրառվող մաքսային գործառնությունների մասին:

Դասընթացի ավարտին ելույթներով հանդես են եկել նաև այլ երկրների ներկայացուցիչներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի շրջանակներում չէր նախատեսվում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում, սակայն դասընթացի ընթացքում տեղի է ունեցել փորձի փոխանակում, ինչը կնպաստի ինչպես առօրյա աշխատանքային գործառնությունների առավել արդյունավետ իրականացմանը, այնպես էլ նոր առաջարկների ներկայացման շրջանակում մաքսային բարեփոխումների իրականացմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջազգային առևտրի ծավալների ավելացմանը զուգընթաց վերջինիս հսկողության արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի մաքսային գործառնությունների իրականացման ժամանակ խելացի համակարգերի կիրառումը: Մասնավորապես, մաքսային ծառայությունում անհրաժեշտություն է արդեն ունենալ խելացի համակարգեր, որոնք հնարավորինս կնվազեցնեն ծախսվող ժամանակը և մարդկային ռեսուրսի ներգրավվածությունը՝ ապահովելով համապարփակ հսկողություն:

Հարկ է նշել, որ կարևոր նշանակություն ունի տվյալների փոխանակումը, մասնավորապես Չինաստանում գործող «Մեկ պատուհան» համակարգի միջոցով իրականացվում է էլեկտրոնային տվյալների փոխանակում «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության անդամ երկրների միջև. օրինակ՝ Չինաստանում ներդրված ըստ բեռնարկղերի համարների վերջիններիս հետագծելիության համակարգի միջոցով հնարավոր է առավել թիրախային վերահսկել բեռնարկղերով տեղափոխվող ապրանքները: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կողմից վերոնշյալ տվյալների ստացման պարագայում հնարավոր կլինի առավել թիրախային վերահսկել Հայաստանի Հանրապետություն վերոնշյալ երկրներից ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից վերոնշյալ երկրներ արտահանվող ապրանքները՝ ինչպես մաքսանենգության դեպքերի կանխարգելման, այնպես էլ մաքսային վճարների չվճարման մեխանիզմների բացահայտման նպատակով:

Չինաստանում նաև ներդրված է մաքսային հայտարագրերից և այլ փաստաթղթերից հավաքագրվող տեղեկությունների մեծ շտեմարան, որը հնարավորություն է տալիս, ի թիվս պլանավորված վերլուծությունների, նաև պահային վերլուծություններ իրականացնել արտահանվող և (կամ) ներմուծվող ապրանքների՝ ըստ երկրների, ըստ ապրանքատեսակների և ըստ փոխադրման տեսակների նկատմամբ:

Հարկ է նշել, որ Չինաստանում բացի ազատ տնտեսական գոտիները, առկա են նաև հատուկ ազատ տնտեսական գոտիներ, որտեղ կիրառվում են հատուկ պարզեցված մաքսային գործառնություններ:

Նորարարություններին համընթաց «Խելացի մաքսային ծառայություն, խելացի սահմաններ և խելացի կապուղի» առանցքային նախաձեռնության շրջանակներում առանցքային դեր ունի մաքսային մարմինների տեխնիկական վերազինումը: Այդ շրջանակում

առաջարկվում է ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության ուղևորների մաքսային սպասարկման և հսկողության բաժնի տեղեկատվական սրահում տեղադրել ինտերակտիվ (smart) սենսորային էկրան, որը կպարունակի մաքսային սահմանով ֆիզիկական անձանց և ապրանքների տեղափոխման վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Սոսե Ստեփանյան

Աննա Բերակչյան

Մարիամ Տիտիզյան

Հասմիկ Մինասյան

Տաթևիկ Դանիելյան

Ջուլիետա Մկրտչյան

26.08.2024թ.